

# ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ Ն

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար



## ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ. ՄԱՐՏԱԿՐԱԿԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Սիջազգային գիտագործնական կոնֆերանս

2011թ. դեկտեմբերի 9-10-ը երևանի «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» սրահում տեղի ունեցավ «Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտագործնական կոնֆերանսը: Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ Սիյուռքի մախարարությունը, «Հիքսոս» հիմնադրամը և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը:

Հայաստանից ելույթներով հանդես եկան «Նորավանք» ԳԿՀ տնօրեն Գագիկ Հարությունյանը («Հայության կրոնադավանաբանական խնդիրները գլոբալ զարգացումների համատեքստում»), ՀՀ կառավարության աշխատակազմի, ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության պետ Վարդան Ասցատյանը («Հայության այլակրոն և այլադավան հատվածների հարաբերություններն ու միավորման խնդիրները»), «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական



կենտրոնի ղեկավար Արեստակես Սիմավորյանը և Մույն կենտրոնի փորձագետ Վահրամ Հովյանը («Հայության դավանաբանական հատվածների համախմբման ձևերը և մեխանիզմները»), ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը («Հայության ժամանակակից խնդիրները կրոնական հարթության մեջ»), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «Ձայն Համաշխարհային» ամսաթերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը («Կրոնա-

փոխ համաշենահայեր. փոխադարձ ծանոթություն»), ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի փոխղեկ Ռուբեն Մելքոնյանը («Իսլամացված հայերի թեմայի ուսումնասիրությունը. խնդիրներ և հեռանկարներ»):

Սիյուռքից զեկուցումներով հանդես եկան Բոխումի Ռուր համալսարանի Սիյուռքի և ցեղասպանագիտության ինստիտուտի տնօրեն Սիիրան Դաբաղը («Մերժված գիտելիք և ֆրագմենտացված կյանքի պատմություն. կրիպտոհայերի ինքնության կոնցեպտ պատմությունների ձևակերպման խնդիրը»), Հալեպի Համազգային հայագիտական հիմնարկի դասախոս Հակոբ Չոլաքյանը («Ծագումով հայ լատինները Սուրիոյ մեջ»), Բեյրութի Դպրոցական հայագիտության զարգացման կենտրոնի տնօրեն Վարդան Թաշճյանը («Միջարանուանական գործակցությունը Լիբանանի հայ համայնքում. փորձառուիցներ եւ հեռանկարներ»), Լիբանանից լրագրող Համո

Մուսկոֆյանը («Կրոնափոխ հայերի զարթոնքը»): Գիտաժողովում քննարկվեցին Սիյուռքի հայ համայնքներում տարբեր կրոնադավանական հատվածների՝ իսլամացված, կաթոլիկ, ալետարանական և լատինադավան հայերի արդի խնդիրները: Հատուկ ուշադրություն դարձվեց նաև նրանց շրջանում ազգային ինքնության պահպանման, միջդավանական համերաշխություն և համագործակցության մթնոլորտի ապահովման միջոցներին: Ամփոփմանը գիտաժողովի մասնակիցների առաջարկությունների հիման վրա ընդունվեց որոշում զեկույցների հրատարակման և այսուհետև նույնպես ոլորտի խնդիրների ուսումնասիրման ու լուծման ուղղությամբ տարբեր ձևաչափերով աշխատանքները շարունակելու մասին: Ստորև ներկայացնում ենք գիտաժողովում Ս. Վարդանյանի կարգացած զեկույցումը:

Այսօր՝ 2011թ. տարեվերջին, երբ մի քանի ամիս հետո պիտի մշվի հայ գրատպության 500-ամյակը, երբ Հայաստանում ու աշխարհի տարբեր երկրներում լույս են տեսնում հարյուրավոր հայերեն թերթեր ու ամսագրեր, անհավանական է, բայց փաստ, որ մենք՝ 1600 տարվա գիր ու գրականության տեր հայերս, դեռևս լիովին չենք ճանաչում մեզ: Նույնիսկ 130 տարի առաջ Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» թերթում քննարկվում էր թե բողոքական և կաթոլիկ հայերին կարելի՞ է հայ համարել: Մեծանուն գրող Ռաֆֆին 1880-ին «Մշակում» (N121) գրեց, որ «Կաթոլիկությունը, բողոքականությունը և միևնույն անգամ մահմեդականությունը չեն գրկում հային հայ լինելուց»: Բայց մեծ գրողի խոսքը հասարակական տեսակետ չդարձավ, նման վեճերից ու հակադիր դիրքորոշումներից Հայաստանում ու գաղթօջախներում շատ ճակատագրեր խեղվեցին, նաև արյուն հեղվեց: Այսօր, գուցե շատերը ժպիտով պատասխանեն, թե՛ ի՞նչ հարց, իհարկե, բողոքական և կաթոլիկ հայերը հայ են, բայց ո՞նց խոսքի, վերաբերմունքի մեջ ինչ-որ վերապահություն կզգաք: 11 տարի աշխատելով ՀՀ կառավարության առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահ, պիտի անկեղծ ասեմ, որ թե հոգևորականների ու պաշտոնյաների, թե պարզապես քաղաքացիների կողմից բազմիցս նկատել են այդ վերապահության տարբեր արտահայտություններ: Եթե քրիստոնյա մեր եղբայրների համդեպ նույնիսկ այսօր կա այդ վերաբերմունքը,

## Կրոնափոխ համաշենահայեր. փոխադարձ ծանոթություն

ապա պետք է պատկերացնել, թե նախկինում ինչպիսի մեթոդական հասարակական կարծիք է տիրել բռնի մահմեդականացված հայերի հանդեպ: Դեռ 1887թ. «Մշակում» (N13) Գրիգոր Արծրունին գրում է, որ երբ «շատ տարի սրանից առաջ մենք այն միտքը յայտնեցինք, թե Ռուսաստանից նուաճված Կարսի և մասամբ Բաթումի մահմեդական բազմաթիւ են հայ-մահմեդականներ, որոնք բռնի կերպով ընդունեցին իսլամը թիրքաց տիրապետութեան տակ, - մեզ ոչ ոք չէր ուզում հավատալ»: Այդ, կովկասահայությունը Կարսի և Բաթումի շրջակայքի մահմեդական հայության մասին լուր չունեն, և չէր ըմբռնում իրականությունը, այն է՝ դարեր շարունակ բռնի կրոնափոխվել են հայերի բազում գյուղեր ու գավառներ, և հենց իրենց կողքին ապրում են այնպիսի հայեր, ովքեր հերոսաբար պահել են լեզուն: Նշեն, որ բազմաթիվ կրոնափոխություններ են եղել նաև Սյունիքում, Նախիջևանում ու Արցախում: Բնական է, որ այն օրերին «Մշակի» ընթերցողները շատ չէին և Ռաֆֆու ու Արծրունու գաղափարները չէին կարող լուսավորել գյուղական անլույս օդաների բնակիչներին: Բայց նրանց հողվածներից մոտ հարյուր տարի հետո՝ 1984-ին, երբ ես եղա Արծրունու

նշած Բաթումի մոտակա գյուղերից 1944-ին Ղրղզստան և Ղազախստան արքայազմ կրոնափոխ հայերի մոտ, վերադարձից հետո երևանում կրկին բախվեցի ակնապիշ հայացքների, նաև թշնամանքի, թե մահմեդական ու հա՛: Անշուշտ, շատ կային նաև լայնախոհ մարդիկ: Այդ օրերին Ղրղզստանում, Ղազախստանում ու Ուզբեկստանում բնակվում էր շուրջ 3000 կրոնափոխ համաշենի և շատերն ինձ ասում էին, որ բանակում ու Սև ծովի ափին, տարբեր հանգստավայրերում ու մեծ քաղաքներում, հենց իրենց բնակավայրերում՝ Ղրղզստանի Օշի մարզում, Կզըլ-Կիյա քաղաքում, Բիշքեքում, Տաշքենդում հայերի հետ շփվելիս իրենց միշտ ասել են, որ եթե մահմեդական եք, ուրեմն հայ չեք, թեև նրանց հանդիպած բոլոր հայերն էլ զարմանում էին, որ նրանք խոսում են հայերեն: Նրանք ինձանից խնդրում էին իրենց պատմության մասին ռուսերեն գրքեր ուղարկել: Ասում էի՝ չկա: Անցել է 27 տարի, Ղրղզստանի, Ղազախստանի և Ուզբեկստանի կրոնափոխ համաշենի մի մասը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամաս, Ռոստովի և Վորոնեժի մարզեր: Վերջերս համացանցով նամակ ստացա ռուսաստանաբնակ կրոնափոխ համաշենահայեր-

ից, նորից խնդրում էին իրենց պատմության մասին ռուսերեն գիրք, որում խոսվեր նաև իրենց բարբառի և գրական հայերենի համեմատության մասին: Գրեցի, որ նրանց մոտ հյուրընկալվելուց երկու տասնամյակ անց՝ 2009-ին, վերջապես տպագրվեց իմ «Կրոնափոխ համաշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գիրքը, որում հենց իրենցից գրառածս նյութերն են, բայց ռուսերեն գիրք չկա: Հասկանալի է, որ ռուսերեն թարգմանության, հրատարակության համար որոշակի գումար է պետք: Այսինքն, կրոնափոխ համաշենիները ցանկանում են ծանոթանալ իրենց ու նաև մեր պատմությանը, բայց մենք նրանց այդ հնարավորությունը չենք տալիս: Ինչո՞ւ: Չգիտեմ:

Այստեղ ուզում են հարց տալ, եթե կրոնափոխ համաշենիներին չենք ճանաչում, իսկ քրիստոնյա համաշենահայերին լա՞վ ենք ճանաչում: Մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1944թ., մեկնում է Աբխազիա՝ Գագրա, 25 օր մնալով այնտեղ ուսումնասիրում է Համաշենի բարբառը և երեք տարի անց՝ 1947թ., հրատարակում իր «Ընկերություն Համաշենի բարբառի» գիրքը:

Շարունակությունը՝ 5-րդ էջում:

# «Ակունքի» հարցազրույցը համշենական ՀԱՏԻԿ կազմակերպության հիմնադիրների հետ

**2011** թ. դեկտեմբերին «Ակունքի» խմբագրակազմը գտնվում էր Ստամբուլում և այցելեց նաև Համշենական մշակույթի ուսումնասիրման և պահպանման միության (ՀԱՏԻԿ) գրասենյակ, զրուցեց ՀԱՏԻԿ-ի հիմնադիրների՝ Մեհմեդ Ալթունբայաջի, Հիքմեթ Աբչիչեքի և Քամիլ Սուրբիի հետ: Ստորև ներկայացնում ենք «Ակունքի» թղթակից Մեհմեդ Ալթունբայաջի հարցազրույցը ՀԱՏԻԿ-ի հիմնադիրների հետ:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ե՞րբ է հիմնվել Համշենական մշակույթի ուսումնասիրման և պահպանման միությունը (ՀԱՏԻԿ-ը), և ովքեր են միության հիմնադիրները:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- ՀԱՏԻԿ-ը հիմնվել է 2011 թ. հունիսի 29-ին: Հիմնադիրներն են Հիքմեթ Աբչիչեքը, Քամիլ Սուրբին և Մեհմեդ Ալթունբայաջին: Ունենք ևս 4 ընկերներ:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ո՞րն է ՀԱՏԻԿ միության նպատակը:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- ՀԱՏԻԿ միության նպատակը մեր սեփական մշակույթի պահպանումն է:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ինչպե՞ս ծագեց նման միություն հիմնելու գաղափարը:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Խոփայի շրջանում բազմաթիվ միություններ էին հիմնվել, ինչպես, օրինակ, վրացիների միությունը, լազերի միությունը: Մենք առանց այդ էլ ուշացել էինք այս հարցում: Ահա և մենք էլ ստեղծեցինք մեր միությունը:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Սա համշենցիների առաջին միությունն է:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Այո:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ինչպիսի՞ գործունեություն է ծավալում ՀԱՏԻԿ-ը:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Մեր բանախուսությունն ենք ներկայացնում, պարկապուղի դասընթացներ կազմակերպում և այլն:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Քանի՞ անդամ ունի ձեր միությունը:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Մեր անդամների թիվը հասել է 260-ի:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ի՞նչ նախագծեր ունեք, որ նախատեսում եք իրականացնել մոտակա ժամանակաշրջանում:

**Հիքմեթ Աբչիչեք**- Այս միությունը ստեղծելու նպատակն է թույլ չտալ, որ համշենական լեզուն ու մշակույթը կամաց-կամաց անհետանան՝ ուրբանիզացիային զուգահեռ: Հետևյալ հասարակ օրինակը տամ. մենք՝ միության հիմնադիրներս, 3 հոգի ենք: Երեքս կանայք էլ համշենցի չեն, և մեր երեխաները համշենցի չեն, և մեր երեխաները համշենցի չեն, և մեր երեխաները համշենցի չեն: Դա կարող է պատահականություն լինել, բայց պատահականություն չէ, քանի որ իրականում մեր մյուս ընկերների տիկնայք նույնպես համշենցի չեն: Հետևաբար՝ այդ հանգամանքը մեր մեջ մտահոգություն է հարուցում՝ մեր լեզվի մշակութային ոչնչացումը: Մեկտեղվել ենք՝ հենց այդ մտահոգությունից ելնելով: Ինչ վերաբերում է այն նախագծերին, որ պետք է իրագործվեն, դրանց շարքում առանձին տեղ ունեն սոցիալական ոլորտում նախատեսվող միջոցառումները: Խոսքը հարսանիքների, դաշտահանդեսների, յայլաների մասին է: Մարդիկ իրենց ծննդավայր են գնում-զալիս տարբեր ժամանակներում: Մենք էլ նրանց առաջարկելու ենք, որ օգոստոս ամսին այդ կողմերը գնանք ու յայլա բարձրանանք և միասին պահպանենք մեր մշակույթը: Կարելի է նման առաջարկով հանդես գալ:

Համշենցիներն սովորելու ցանկություն են հայտնում հատկապես Չամլիհեմշինի շրջանի երիտասարդները: Այստեղ լեզուն մոռացող մեր երիտասարդների համար դասընթացներ ենք կազմակերպելու: Սակայն համշենցիներն լեզուն ուսուցանելու համար նյութեր չունենք: Հետևաբար՝ նախ և առաջ պետք է դասագիրք հրատարակել:

Ունենք նաև համշենական մշակույթի և պատմության վերաբերյալ գիտական



որոշ ուսումնասիրություններ անելու, համշենցիները, առնվազն այսօրվա վիճակով, ներկայացնելու ծրագրեր. այսինքն՝ գրել համշենցիների քերականությունը, դասագրքեր, կազմել բառարան, համշենական մշակույթի վերաբերյալ նկարահանել ֆիլմեր: Ուզում ենք առաջիկայում հեքիաթներ ժողովել և այլն:

Այս միությունը ոչ միայն որոշակի գաղափարների տեր համշենցիների

այն լեզուները, որոնք գտնվում են անհետացման վտանգի առաջ: Մենք կողմ ենք, որ պահպանվեն նաև ոչնչացման վտանգի ներքո եղող մյուս մանր-մունր համայնությունների լեզուները, նաև կողմնակից ենք, որպեսզի կրթօջախներում գիտական ամբիոններ բացվեն՝ հենց այդ նպատակով. դա պետք է պետությունն անի:

Մենք շատ լուրջ խնդիրներ ունենք համշենական պատմության առնչությամբ: Այդ խնդիրները հիմնականում քննարկվում են մտավորականների շրջանում. դրա մասին մեր ժողովրդի մեծ մասը գաղափար չունի: Հենց դա է մեր մտահոգությունը. մեր ժողովրդի հետ ինչպե՞ս կազմակերպել այդ քննարկումները, որովհետև



կազմակերպությունն է և ոչ էլ՝ հայ լինելու գիտակցությամբ մեկտեղված համշենցիների միություն: Կան իրենց բուրդ զգացող մարդիկ, կան իրենց հայ համարողներ կամ այդ հանգամանքը չկարևորողներ: Ձգտում ենք նրանց բոլորի համար էլ ժողովրդավարական միջավայր ստեղծել: Դրա համար էլ չենք ցանկանում, որ հատկապես ցեղին, պատմությանը վերաբերող մասը դառնա առօրյա քաղաքական լեզվի նյութ. մենք ունենք նման հարցերը գիտական հարթության վրա քննարկելու, ուսումնասիրելու դիրքորոշում: Եթե որևէ գիտնական համշենական պատմության, ինքնության մասին որևէ ուսումնասիրություն անի, նրան կիրավորենք այստեղ՝ զեկուցում կարդալու: Կամ էլ որևէ գիտնականի կատարած «Մի ուսումնասիրություն կատարի համշենական պատմության վերաբերյալ»:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ձեր միության անդամների մեջ երիտասարդները շատ են:

**Հիքմեթ Աբչիչեք**- Այո: Երիտասարդներն ուզում են համշենցիներն սովորել, բայց մենք դասագրքեր չունենք այդ լեզուն ուսուցանելու համար:

**Քամիլ Սուրբի**- Մենք նաև լուրջ պահանջներ ու նպատակներ ունենք՝ այնտեղ բնակվող մեր մարդկանց, այնտեղի մեր շրջակա միջավայրի կապակցությամբ: Մենք միաժամանակ դեմ ենք հանդես գալիս մեր շրջաններում գտնվող գետերի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցմանը: Մենք նաև ուզում ենք, որ պահպանվի ոչ միայն համշենցիները, այլ նաև՝ մյուս

նրանք շատ քիչ են հետաքրքրվում մեր պատմությամբ: Այսինքն՝ եթե մենք այստեղ կարողանանք կրթել այնպիսի գիտնականների, ովքեր կկարողանան գիտականորեն հասու դառնալ մեր գոյության, պատմության վերաբերյալ գիտելիքներին, կամ եթե այդ հարցը քննարկենք արդեն պատրաստի գիտնականների հետ, իհարկե կխոսենք պատմության մասին: Արդեն իսկ հենց դա է մեր նպատակներից մեկը: Բնականաբար մտահոգություն չունենք այդ հարցը քննարկելու առումով, բայց ասում ենք՝ նախ կապեր հաստատենք մեր սեփական ժողովրդի հետ: Համշենցիների պատմության վերաբերյալ չկա գրի առնված որևէ պատմություն: Համեմայն դեպք՝ մեր ձեռքի տակ չկա. կարող է գիտնականների մոտ լինել, բայց մեզ հայտնի չէ: Մենք տիրապետում ենք առավելագույն բանավոր պատմությանը: Դրա համար էլ մենք կարծում ենք, որ պետք է ի մի բերենք մեր նախնիների, մեր ժողովրդի վերաբերյալ բանավոր պատմությունը: Հենց դրան է ուղղված մեր աշխատանքներից մեկը: Նախ պետք է անհետացող մշակույթս, վերացող լեզուս պահպանենք, որ պատմությունս ուսումնասիրենք: Ըստ իս՝ դա պարտադիր է:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Ձեր երիտասարդները հետաքրքրվում են համշենական պատմությամբ:

**Քամիլ Սուրբի**- Հետաքրքրվողներ էլ կան, չհետաքրքրվողներ էլ: Սակայն մեր միությունում երիտասարդները շատ են:

**Հիքմեթ Աբչիչեք**- Մեր միությունն այն

վայրն է, ուր կարող են դիմել նրանք, ովքեր ուզում են որևէ ուսումնասիրություն անել համշենականության վերաբերյալ, ովքեր որևէ ասելիք ունեն այդ մասին, կամ ովքեր հետաքրքրվում են դրանով: Մենք պարտավոր ենք այնպիսի մթնոլորտ ստեղծել, որ մարդիկ ասեն՝ ՀԱՏԻԿ-ը կա, դա քննարկենք ՀԱՏԻԿ-ում, այնտեղ որևէ լուծում կգտնենք: Այլապես եթե ՀԱՏԻԿ-ը դառնա մի տեղ, ուր 15 հոգի է այցելում, մեր կարծիքով՝ անիմաստ կլինի: Մենք մտադիր ենք ՀԱՏԻԿ-ը վերածել մի մեխանիզմի, որը կդառնա բոլոր համշենցիների ընդհանուր բանականությունն ու ոգին: Դրա համար էլ մի փոքր դանդաղ ենք առաջ ընթանում: Գոյություն ունեն մարդիկ, ովքեր տարբեր կերպ են մտածում հատկապես էթնիկ ինքնության հարցում, ովքեր գտնվում են պաշտոնական գաղափարախոսության ազդեցության տակ: Կարևորը մարդկանց՝ հայկական կամ թուրքական ծագման մասին գաղափարները նորմալ մակարդակի հասցնելն է, այսինքն՝ հակադեցության մակարդակից հանելը: Մենք այս հասարակությանը (նկատի ունի թուրքական հասարակությանը- Ակունքի խմբ.) պատկանող մարդիկ ենք: Արդեն իսկ կրոնական առումով այս հասարակության հետ ենք, լեզվի տեսանկյունից էլ՝ մեծավ մասամբ խառնված: Դրա համար էլ մեր մարդկանց մեծ մասը հակադեցություն է ցուցաբերում հայ լինելու գաղափարին: Մենք համշենցի ենք: Ձգտում ենք տեր կանգնել մեր մշակույթին:

**Քամիլ Սուրբի**- Յուրաքանչյուր հասարակության մեջ կան պատասխանատվություն զգացող և չզգացող մարդիկ: Մեր հանրության մեջ էլ միանալու ենք մեր այն ընկերներին, ովքեր պատասխանատվություն են զգում մեր նուրբ հարցերի նկատմամբ: Սակայն չենք ցանկանում մեր կապերը խզել պատասխանատվություն չզգացողների հետ: Համոզված եմ, որ կարող ենք որևէ կետի հասնել, եթե կարողանանք այստեղ տարբեր տեսակետներով քննարկումներ անել:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Հայկական կազմակերպությունների հետ շփումներ ունե՞ք:

**Հիքմեթ Աբչիչեք**- Երբ ես 30 տարի առաջ Ստամբուլ եկա, ինքս ինձ ասում էի. «Մի հայի համդիպեմ, համեմատեմ, տեսնեմ՝ արդյոք հայերենը համընկնում է համշենցիների հետ, թե՞ ոչ»: Հիմա ճանաչում եմ Սարգիս Սերոբյանին, Բագրատ Եսբուլյանին. մենք ծանոթներ ունենք «Ալօս»-ում, այս երեկո գնալու ենք Դերսիմահայերի միության երեկույթին, բայց, անկեղծ ասած, հատկապես հայկական կազմակերպությունների հետ սերտ լինելու իրադրություն չկա: Դա պետք է ընդունենք:

**Մեհմեդ Ալթունբայաջի**- Իրենց հայ լինելը չընդունող համշենցիները մի՞թե չեն գիտակցում, որ խոսում են հայերեն:

**Հիքմեթ Աբչիչեք**- Դա, իհարկե, դժվար հարց է... Մի քանի տարի առաջ մի հեռուստահաղորդման ժամանակ հաղորդավարը հարցնում է համշենցի մի տարեց կնոջ. «Ձեզ համար ասում են, թե հայ եք: Ի՞նչ կասեք»: Համշենցի կինը թուրքերեն լավ չի հասկանում, համշենցիներով հարցնում է կողքին. «Ի՞նչ գասա» («Ի՞նչ է ասում»): Կողքին էլ պատասխանում է. «Մեզի համար գասին թա էրմենի իք»: («Մեզ համար ասում են, թե հայ ենք»): Կինը հետևյալ պատասխանն է տալիս՝ «Ի՞նչ էրմենի, էսա թյուրքը մեք իք»: («Ի՞նչ հայ: Բուն թուրքը մենք ենք»): Սա սոցիալական իրականություն է: Մենք ուզում ենք այս սոցիալական իրականության մեջ ինչ-որ բան անել մեր մշակույթի, մեր լեզվի, մեր պատմության համար: Ինչ-որ բան անենք այն «Ի՞նչ էրմենի, էսա թյուրքը մեք իք» ասող մորաքրոջ հետ միասին, որովհետև նա մեր մի մասնիկն է. մենք այնտեղից ենք եկել: Արդեն իսկ մի քայլ առաջ ենք գնացել՝ Թուրքիայում այսպիսի միություն ստեղծելով:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# Տոհմածառ

(Արմատներ և սաղարթ. հայի ճակատագիր ...)

Երբ «Չայն համշենականի» 2011թ. NN 3-4-ում հրապարակեցի Մեծ եղեռնի մասին Չանակ տատի (Չանիկ Գալուստի Գալստյանի) հուշերը, այն շատ մեծ արձագանք ունեցավ: 1965-ին դրանք Աբխազիայի Գանթաղի (այժմ Ցանդրիպշ) ավանում գրառել էր Եփրեմ Չաբարյանը: Այդ գրառումը տարիներ առաջ ինձ տվեց Աբխազիայի Գագրա քաղաքի Խ. Աբովյանի անվ. հայկական դպրոցի տնօրեն, բուլղոսի կողմից հարգված և սիրված, երկարամյա մանկավարժ Լևոն Կրբաշյանը: Ընդարձակ ծավալի պատճառով այն չէի կարողանում թերթում հրատարակել, բայց վախճանալով, որ հուշագրությունը կարող է կորել, ի վերջո, որոշեցի տպագրել: Նամակով դիմեցի արդեն հանգստի անցած Լևոն Կրբաշյանին և խնդրեցի աջակցել ճշտելու Եփրեմ Չաբարյանի կենսագրությունը, գտնելու նրա, Չանակ տատի, Սամվելի լուսանկարները: Օրեր անց Լևոն Կրբաշյանը Գագրայի հայկական դպրոցի աշխատակցուհի Անի Տերտերյանի օգնությամբ ինձ համացանցով փոխանցեց Գանթաղիում ձեռք բերված լուսանկարներն ու Եփրեմ Չաբարյանի մասին տեղեկությունները: Դրանք տպագրվեցին թերթում՝ «43 տարի անց» վերնագրով հուշագրության հետ: Այն կարդալով, ինձ զանգահարեց թերթի մշտական ընթերցող, ճանաչված մտավորական, լրագրող, պատմաբան, բեյրութցի, այժմ երևանաբնակ Գևորգ Յազըճյանը, և ասաց, որ ինքը Բեյրութում ճանաչում էր Չանակ տատի որդուն՝ Սամվելին: Գևորգ Յազըճյանի միջոցով էլ Բեյրութում գտանք Սամվելի երեխաներին՝ Իշխան և Արա Անդրանիկյաններին, իսկ Լուս Անջելեսում՝ Չասմիկ և Քնարիկ Անդրանիկյաններին: Իշխանի և Քնարիկի հետ համացանցով մասնակցություն սկսեցի: Այս ամենի մասին պատմեցի մեր թերթի 2011թ. NN 5-6-ում, բայց թերթի ընթերցողները շարունակում էին ինձ հարցեր տալ, հետաքրքրվել, թե չգտնվեցի՞ն Չանակ տատի Աբխազիայում ապրող ազգականները, հարցնում էին Սամվելի երեխաների ճակատագրերի մասին: Անցած ամիսների ընթացքում հնարավորություն ունեցա որոշ մանրամասներ ճշտել:

Քնարիկը ավարտել է Բեյրութի Զոհիսիմյանց վարժարանը, այնուհետև ստացել է ճարտարապետի մասնագիտություն, աշխատել է Բեյրութում, ապա լիբանանյան պատերազմի պատճառով, 1970-ականներին տեղափոխվել է Գերդանան, 4 տարի այնտեղ աշխատելուց հետո մեկնել է ԱՄՆ, ուր և ամուսնացել է, վերջերս ամուսնու ազգանունը՝ Կասսիա: Չայրական տանը նրան փաղաքշաբար Քիքի էին կոչում, և նա ԱՄՆ-ում դարձել է Քիքի Կասսիա: Ամուսինը վաղ է մահացել, Քիքին ապրում է Լոս Անջելեսում և այժմ ֆեյսբուքի ակտիվ մասնակիցներից է, նրա ներդրած նկարները, ծաղրանկարները, գունազարդ բացիկները



*Նստած են ձախից աջ՝ Սեդրակը, Չանակը և Գալստը, Սեդրակի առաջ կանգնած է Մարթան, Չանակի ծնկներին նստած է Գարուբը, Գալստի առաջ կանգնած է որենը, հետևի շարքում երեք քույրերն են՝ Վարդանուշը, Արիկը, Արշալույսը (հավանաբար 1931թ.):*

ըր տեսնողը և ամերիկացի ընկերուհիներին անգլերեն գրած հաղորդագրություններն ու երկտողերը կարդացողը կմտածի որ տիպիկ ամերիկուհի է, երբեք չի կասկածի, որ էջի հեղինակը հայուհի է, այն էլ Մեծ եղեռնից մազապուրծ Չանակ տատի Դիարբեքիում կորած որդու դուստրը: Քնարիկի քույրը՝ Գասմիկն էլ սովորել է Բեյրութի Գալստյանական քոլեջում, աշխատել է «Վոլվո» ընկերությունում, բայց լիբանանյան պատերազմի պատճառով, 1970-ականների երկրորդ կեսին մեկնել է ԱՄՆ: Լուս Անջելես: Արա Անդրանիկյանն էլ կիթառահար է, որպես երաժիշտ աշխատել է Գալստյան, 1976-ին մեկնել է Նորվեգիա: Տասը տարի հետո վերադարձել է Բեյրութ: Իշխան Անդրանիկյանի մասին նախորդ հրապարակման մեջ գրել եմ, ավելացնեմ, որ նա մնացել է Բեյրութում, խնամել հորն ու մորը, ամուսնացել է Կարինե Աբրահամյանի հետ: Ցավոք, Սամվելի 4 զավակներից ոչ մեկը երեխա չունի: Իշխանին ուղարկված թերթերի շնորհիվ Բեյրութում էլ շատերը ծանոթացան Չանակ տատի և իրենց համաքաղաքացի Սամվել Անդրանիկյանի դառը կյանքի պատմությանը: Թերթի երկու հարյուր օրինակ էլ ուղարկեցի Աբխազիա, խնդրելով, որ անպայման հանձնեն Լևոն Կրբաշյանին, Գագրայի հայկական դպրոցին, Եփրեմ Չաբարյանի և Չանակ տատի Գանթաղիում բնակվող ազգականներին: Շուտով, երբ Աբխազիայի հայ համայնքի ղեկավար Սուրեն Կերսեյանն ու փոխնախագահ, Աբխազիայի հերոս, Գագրայի հայկական դպրոցի նոր տնօրեն Գալուստ Տրապիզոնյանն աբխազահայությանը հուզող հարցերով երևան գալով այցելեցին նաև ինձ, նրանցից տեղեկացա, որ հուշագրությունն Աբխազիայում շատ մեծ հետաքրքրություն



*Արևիկ (Արևալույս) Չանուկյանը (Մոջ):*



*Չախից՝ աջ, Արևիկը, Գասմիկը, Արևալույսը, Գարուբը, Վարսենիկը և Ռիտան Աղևերի չրջանի Նիժնյայա Շիլովկա գյուղում՝ Արևալույսի տանը, նրա ծննդյան 75-ամյակի առթիվ (2009թ.):*

է առաջացրել, շատերը, որ նախկինում ընդհանրապես ընթերցանությանը աչքի չէին ընկել, իրենցից թերթի այդ համարն են խնդրում: Նրանց հետ կրկին մի 200 օրինակ թերթ ուղարկեցի Աբխազիա: Եվ ահա, սեպտեմբերին Կրասնոդարի երկրամասի ծովափնյա Աղևեր քաղաքից ինձ զանգահարեց Չանակ տատի որդու՝ Գարուբի դուստրը՝ Գասմիկը, և խնդրեց Իշխան Անդրանիկյանի Բեյրութի հասցեն և հեռախոսահամարը: Ասացի, որ չունեմ և հուշեցի Իշխանի հետ կապ հաստատելու դյուրին ձև.

քանի որ Իշխանը ֆեյսբուքում էջ ունի, խորհուրդ տվեցի նրան այնտեղ որոնել: Գասմիկն ասաց, որ դուստրը՝ Գրետա Էքզարյանը կապ կհաստատի: Օրեր անց Իշխանից տեղեկացա, որ հենց ֆեյսբուքով էլ ազգականներն իրար գտել են: Ես նույնպես այդ միջոցով ծանոթացա Չանակ տատի ծոռների հետ՝ Աղևերում բնակվող 19 ամյա Գրետա Էքզարյանի, Գանթաղում ապրող Սեդրակի և Պայծառի դստեր՝ Սյուզաննա Չանուկյանի հետ: Սյուզաննան 1997-ին ավարտել է Գանթաղիի Ավ. Իսահակյանի անվան հայկական դպրոցը: Նա ինձ պատմեց, որ ազգականներին գտնելու համար իրենք նույնիսկ դիմել են ռուսական հանրահայտ «Սպասիր ինձ» («ժող մենյա») հեռուստահաղորդմանը, բայց արդյունքի չեն հասել: Սյուզաննան 6 տարեկան է եղել, երբ Չանակ տատիկը մահացել է, բայց նրա հիշողության մեջ տպավորվել է, որ Չանակ տատիկն իրեն ու եղբորը՝ Գարուբին ատում էր. «Չէր հարսանիքն էլ տեսնեի, հետո մեռնեի»: Ի դեպ, Սյուզաննայի և ազգականների միջոցով ճշտեցի, որ Չանակ տատիկը մահացել է 1986թ., և ոչ թե 87-ին, ինչպես հետագայում իր գրածին հիշողությամբ հավելել է Եփրեմ Չաբարյանը: Շուտով ֆեյսբուքի միջոցով ծանոթացա նաև Արևիկ (Արևալույս) Խորենի Չանուկյանի հետ, որն ամուսնու՝ Գրիգոր Խաչատրյանի, դստեր՝ Գայանեի և թոռան՝ 8-րդ դասարանցի ժամնայի հետ բնակվում է Սոչի քաղաքում: Արևիկը ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի դառնալու համար ցանկացել է ուսումը շարունակել Երևանի վ. Բոյոստյի անվ. դի մեծ եղեռնից առաջ, բայց երբ ես տեղափոխվել Աբխազիա ու Ուրբեխտան, ինչ ճակատագիր են ունեցել, ինձ անհայտ է: Գնարավոր եղավ ճշտել, որ եղբայրներից Կարապետն ունեցել է 10 երեխա՝ 3 տղա և 7 աղջիկ: Երկու տղան անհայտ կորել են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այժմ այդ 10 երեխաներից ողջ են 2 աղջիկը, որոնցից մեկը՝ Երջանիկը, Չանակի առաջին ամուսնու՝ Խաչիկի եղբոր՝ Սահակի հարսն է: Գուշագրության մեջ ասվում է նաև, որ Չանակն ամուսնացել է Սեդրակ Չանուկյանի հետ, երեխաներ ունեցել: Այսբանը: Փորձեմ ավելի մանրամասն ներկայացնել նրա կյանքի այս դրվագը ևս: Երբ Օսլուղ գյուղից 8-10 կմ հարավ՝ դեպի ծովափ՝ Գանթաղի տանող ճանապարհին գտնվող Չետվորտի կվարտալ (Չորրորդ թաղ) գյուղում մահանում է Սեդրակ Չանուկյանի կինը՝ 35-ամյա Արևալույսը, թողնում է 5 երեխա, չորս աղջիկ՝ Գայանե, Վարդանուշ, Արիկենիկ և Արշալույս և մեկ տղա՝ Խորեն, որն ինձ օգնող Արևիկի (Արևալույս) ապագա հայրն էր, և այն ժամանակ ընդամենը 9-10 ամսական էր:

րի ու ծոռների մասին տարբեր հարցեր էի ուղղում, իսկ նա շատ բարեխղճորեն ճշտում էր և համբերատար պատասխանում: Նաև օգնում էր պարզելու հին լուսանկարներում պատկերվածներին: Ուստի իմ խորին շնորհակալությունն են հայտնում տիկին Արևիկին: Եվ այսպես, թերթի ընթերցողներին են ներկայացնում Չանակ տատի կյանքի որոշ դրվագների մասին իմ հավաքած տեղեկությունները: Պետք է խոստովանեմ, որ այս աշխատանքը բավականին դժվարին և աշխատատար էր, Մեծ եղեռնից անցել է ինը տասնամյակից ավելի, հուշագրության մեջ պատմվող իրադարձությունները ևս մի քանի տասնամյակների կաղեմություն ունեն, դեպքերի մասնակիցներից շատերը վաղուց ողջ չեն, ողջերն էլ կամ լավ չեն հիշում, կամ էլ այն տարիներին իրենք էլ փոքր են եղել, ի վերջո, ո՞վ կմտածեր, որ կես դար հետո այդ օրերի իրադարձությունների մասին Գայաստանից իրենց մի շարք հարցեր են տալու և պատասխանները, թվերը, դեպքերն ու դեմքերը, անունները պետք է լինեն գիտականորեն ճշգրիտ: Եվ այսպես, հերթականությամբ մի կողմ տանեմք անցյալի վարձակյունները: Գուշագրության մեջ ասվում էր, որ Չանակը 80 հոգու հետ գաղտնի նավակ վարձելով Թուրքիայից տեղափոխվել է Աբխազիա, հանգրվանել Օսլուղ գյուղում, եղբոր՝ Կարապետի մոտ: Ի դեպ, Չանակն ուներ ևս 2 եղբայր՝ Արթուրը, որն ապրում էր Աբխազիայի Ալախաձե (այժմ Ալախաձիխ) գյուղում, և Գանթաղում, որն ապրում էր Ուրբեխտանում: Կարծում եմ, որ նրանք Աբխազիա՝ Օսլուղ էին եկել դեռևս Մեծ եղեռնից առաջ, բայց երբ ես տեղափոխվել Աբխազիա ու Ուրբեխտան, ինչ ճակատագիր են ունեցել, ինձ անհայտ է: Գնարավոր եղավ ճշտել, որ եղբայրներից Կարապետն ունեցել է 10 երեխա՝ 3 տղա և 7 աղջիկ: Երկու տղան անհայտ կորել են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այժմ այդ 10 երեխաներից ողջ են 2 աղջիկը, որոնցից մեկը՝ Երջանիկը, Չանակի առաջին ամուսնու՝ Խաչիկի եղբոր՝ Սահակի հարսն է: Գուշագրության մեջ ասվում է նաև, որ Չանակն ամուսնացել է Սեդրակ Չանուկյանի հետ, երեխաներ ունեցել: Այսբանը: Փորձեմ ավելի մանրամասն ներկայացնել նրա կյանքի այս դրվագը ևս: Երբ Օսլուղ գյուղից 8-10 կմ հարավ՝ դեպի ծովափ՝ Գանթաղի տանող ճանապարհին գտնվող Չետվորտի կվարտալ (Չորրորդ թաղ) գյուղում մահանում է Սեդրակ Չանուկյանի կինը՝ 35-ամյա Արևալույսը, թողնում է 5 երեխա, չորս աղջիկ՝ Գայանե, Վարդանուշ, Արիկենիկ և Արշալույս և մեկ տղա՝ Խորեն, որն ինձ օգնող Արևիկի (Արևալույս) ապագա հայրն էր, և այն ժամանակ ընդամենը 9-10 ամսական էր:

**Շարունակությունը՝ 4-րդ էջում:**

← (Յետաքրքիր է, որ այդ գերդաստանում հաճախ կրկնվում են անունները, երբեմն նաև ծնողների ու երեխաների): Որդեկորույս Ջանակն այդ հինգի համար հարազատ մայր է դառնում: Նա, որ նոր էր Մեծ եղեռնի սարսափներից փրկվել, ընկնում է վաղաձեռնի ընկերուհու 5 երեխաների հոգսի տակ: Ըստ երևույթին դա եղել է 1923-1924թթ.: Բուլշևիկյան անհանդուրժողականության, սովի ու կարմիր տեռորի, բռնի կոլեկտիվացման, ստալինյան հիվանդագին հետապնդումների կիսաքաղց տարիներին անսահման դժվար էր 5 երեխա մեծացնելը: Ջանակը ոչ միայն Սեդրակի զավակներին է խնամում, այլև ինքն էլ համատեղ կյանքում ունենում է ևս 5 երեխա՝ Մարթային, Արշավիրին, որը փոքր հասակում մահանում է, Վարսենիկին, որը 5-րդ դասարանում (12 տարեկանում) է տիֆից մահանում, հետո՝ 1929-ին ունենում է Յարուբին, իսկ 1934-ին՝ Արևալույսին: Այսօր էլ Յարուբն ու Արևալույսը ողջ են:

Սեդրակի հինգ երեխաներին Ջանակը մեծացրել է, ամուսնացրել, նրանց երեխաների համար էլ հարազատ տատիկ է եղել և շատերը նույնիսկ շփոթում են, թե ով է արյունակից, ով խորթ: Եվ բոլոր երեխաները նրան մայրի (մայրիկ) են ասել, իսկ թոռները՝ մեծ մա (մեծ մայր, տատիկ): Թվարկեն նրանց բուրբին:

Սեդրակի և Արևալույսի մեծ աղջիկը՝ Յայգանը, ունենում է 4 երեխա՝ Արևալույս, Մանուշակ, Սերգեյ, Ջանակ: Վարդանուշն ունենում է 3 աղջիկ՝ Մանուշակ, Արշալույս, Խնգե: Արփենիկը՝ 4 երեխա՝ Մանուշակ, Շուրա, Աշխեն, Անդրանիկ: Արշալույսն ունենում է 5 երեխա՝ Վարսենիկ, Թեֆարկա, Անահիտ, Սվետա, Գեղամ: Իմ նամակագրի՝ Արևիկի ծնողները՝ Ջանուկյան խորեմն ու կինը՝ Մարիամն ունեցել են 2 երեխա՝ Արևիկ (Արևալույս) և Սամվել: Խորեմն իր աղջկան անվանակոչել է իր մոր, իսկ որդուն՝ Ջանակ տատի կորած որդու անունով: Արևիկը հիշում է, որ հայրը երևանցի բանակային ընկեր ուներ, երբ նա հյուր է գալիս, իմանալով, որ Սամվելը կնքված չի, հրավիրում է Յայաստան և Սամվելին Սբ. Էջմիածնում կնքում են: Յայրը միշտ հպարտանում էր, որ որդին կնքվել է Սբ. Էջմիածնում: Սամվելը կնոջ՝ Վարդուհու հետ այժմ ապրում է Ադրբեյջան, նրանց տղան, որի անունը նույնպես Սամվել է, ավարտել է Մոսկվայի համալսարանը և մնացել է Մոսկվայում, աղջիկը՝ Մարինեն, ամուսնացել է և ապրում է Աբխազիայում՝ Նովի Աֆոնում:

Այսքանը Սեդրակի երեխաների, թոռների ու ծոռների մասին:

Իսկ Ջանակի հետ, ինչպես ասացի, Սեդրակ Ջանուկյանն ունեցել է ևս 5 երեխա, որոնցից 2-ը վաղ հասակում մահացել են: Մեծ դուստրը՝ Մարթան, 1944թ. ամուսնացել է Գանթաղիում բնակվող Ռուբեն Գասպարյանի հետ, ունեցել է 3 երեխա, մեկ աղջիկ՝ անունը՝ Ազնիվ և երկու տղա՝ Լևոն և Գրիգոր: Ազնիվն ապրում է Սոչիում, Լևոնը՝ Գագրայում, Գրիգորը՝ Գանթաղիում: Ի դեպ, Մարթայի ամուսինը՝ Ռուբենը, Ջանակ տատի մասին

«43 տարի անց» հուշագրությունը գրառող եփրեմ Ջաքարյանի հարազատ եղբայրն է: Ռուբենի ազգանունը տարբեր է, քանի որ նրան մանկուց որդեգրել է հորաքույրը, որը երեխաներ չունեցր և ապրում էր նույն բակում: Ուրեմն, Ջանակ տատը տարբեր ատյաններ նամակներ գրելու համար դիմել է իր մեծ դստեր ամուսնու հարազատ եղբորը՝ 1930թ. ծնված Եփրեմ Ջաքարյանին, որը 1950թ. ավարտել էր Ծեբեղայի հայկական մանկավարժական ուսումնարանը, 1956-ին՝ Երևանի պետական-սարանի իրավաբանական ֆա-



Սամվել Անդրանիկյանը (Ճանաթեան) հյուր է հորաքրոջ տանը (Ստամբուլ):

կուլտետը, հաշուպետի, Միքելիպչի և Մուխամարի հայկական 8-ամյա դարոցներում տնօրեն էր աշխատել, իսկ 1962 թվականից բնիչ էր Գագրայի ներքին գործերի բաժնում: Այսինքն, մի մարդ էր, որ և գրագետ էր, և իրավաբանական գիտելիքներ ուներ, և կարող էր միջազգային տարբեր ատյաններ նամակներ գրել Ջանակ տատի կորած-գտնված որդուն՝ Սամվելին խորհրդային Միություն այցելելու թույլտվություն տալու համար: Ինչպես տեսնում ենք՝ եփրեմ Ջաքարյանը ոչ միայն պատվով է կատարում Ջանակ տատի խնդրանքը, այլև գրելով «43 տարի անց» հուշագրությունը, այդ շատ հուզիչ պատմությունը շատերին է ծանոթացնում: Նա նաև ստեղծագործում էր, նրա բանաստեղծություններից երկուսը տպագրվել են 2006թ. Երևանում, իմ կազմած «Չայն հանջենական» ժողովածուի 5-րդ հատորում, որում ընդգրկված էին Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայերի ստեղծագործությունները: Եփրեմ Ջաքարյանը 1990թ. փոխգնդապետի աստիճանով թոշակի է անցնում և մինչև իր մահը՝ 2007թ., Գանթաղիում ապրում էր կնոջ՝ Նունիկի և որդու՝ Լևոնի հետ, իսկ դուստրը՝ Անահիտը, Երևանում որպես օտար լեզուների մասնագետ բարձրագույն կրթություն ստանալով վերադառնում է, և այժմ ամուսնու հետ ապրում է Ադրբեյջանում: Նրա տղան ու աղջիկը սովորում են Մոսկվայի պետական-մալսարանում:

Ջանակի մյուս զավակը՝ Յարուբը, ունեցել է 4 երեխա՝ Սեդրակ, Վարսենիկ, Յասմին, Խորեն: Յարուբը ապրում է հայրենի գյուղում՝ նախկին Չետվոյրտի կվարտալում, որը 1932-33թթ. կոլեկտիվացման տարիներին վերանվանվեց Յայաս-

տանի ԿԿ անվան, այնուհետև՝ Չերկվիանի, Կուլբիշի, Ժղանովի, ի վերջո՝ Լենինի անվան կոլտնտեսության: Նրա հետ է ապրում կրտսեր որդին՝ Խորենը, կնոջ՝ Սյուզաննայի և դստեր՝ 4-ամյա Վիկտորյայի և որդու՝ 1-ամյա Արթուրի հետ: Ի դեպ, մինչև 1967 թ. այդ գյուղում՝ Ժղանովում է ապրել նաև ինձ օգնող Արևիկի ընտանիքը: Այդ թվականին նրանք տեղափոխվել են ծովափնյա Լեսելիձե (այժմ Գեջրիպ) գյուղ, բայց Լեսելիձեի հայկական դպրոցը 8-ամյա էր, ուստի Արևիկը ստիպված հաճախում է Գանթաղի

կա հայկական գյուղում: Նա ամուսնացել է Նիժնյայա Շիլովկայում ծնված Ալեք Դոմբալաքյանի հետ, որի հորը՝ Պետրոսին, Թուրքիայից այստեղ են բերել 7 տարեկանում: Արևալույսի կրտսեր որդին՝ Պետրոսը, որին կոչել են պապի անունով, Տամբուլի մարզի Կիրսանով քաղաքի ավիատեխնիկական ուսումնարանն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվում Լիտվայում՝ Կաունասում, որտեղ էլ ամուսնանում է լիտվուհու հետ, ունենում երկու երեխա՝ Պատրիցիյա և Գարիկ: Ի դեպ, ավիատեխնիկումն նա սովորել է Արևիկի եղբոր՝ Ջանուկյան Սամվելի հետ:

Ջանակի առաջին ամուսնու՝ Խաչիկ Ջենլեթյանի (Ճանաթեան) կրտսեր եղբայրը՝ Սահակը, նույնպես ապրում էր Օտլուղում, իսկ հետո ընտանիքով տեղափոխվեց Սոչիի Խոստայի շրջանի Կաշտանովկա գյուղ: Արևիկը հիշում է, թե ինչպես էր Սահակը գալիս տեսնելու ավագ եղբոր նախկին կնոջը: Խաչիկը և Սահակը փոքր քույր են ունեցել, որ Եղեռնի տարիներին կորել է: Յետագայում գտնվել է: Ես փորձեցի Սամվելի զավակների՝ Յասմինի, Քնարիկի և Իշխանի միջոցով որոշ լույս սփռել այս պատմությանը: Բեյրութում

կրտսեր աղջիկը: Եթե մեր ընթերցողներից ոմանք գիտեն Սահակի քրոջ՝ Արաքսիի, Մեծ եղեռնի տարիների դեգերումների և հետագա կյանքի պատմությունը, ապա սիրով կտպագրենք: Յայի այսպիսի ողիսականներ շատ կան, որոնք չգրառվելով արդեն մոռացվում են:

Ջանակ տատի երկրորդ ամուսինը՝ Սեդրակ Ջանուկյանը մահացավ Սամվելի, տիկնոջ՝ Մարիի և որդու՝ Իշխանի, Աբխազիա այցելելու հաջորդ տարին՝ 1965-ի սեպտեմբերին: Նա 82 տարեկան էր: Նրան թաղեցին Օտլուղ գյուղում՝ առաջին կնոջ՝ Արևալույսի կողքին: Ջանակ տատին մահացավ 1986թ. հունվարի 13-ին: Նրան թաղեցին ամուսնու մյուս կողքին, ու գերեզմանի վրա անունը գրեցին Ջանիկ: Նրա մասին հարազատները, երեխաներն ու թոռները, որոնց անմնացորդ նվիրեց իր չարքաշ կյանքը, շատ քիչ բան գիտեն, որովհետև, ինչպես Արևիկն է ասում. «Տատիկը չէր սիրում պատմել իր անցյալի մասին, միայն ասում էր, որ թշնամուն չի ցանկանա տեսնել այն, ինչ ինքն ու իր սերնդակիցները տեսան: Նա անգամ նտովի չէր ուզում վերհիշել այն դժոխքը, որ տեսել էր: Նույնիսկ երբ նա ծիծաղում էր, նրա աչքերը արցունքի մեջ էին: Եվ լավ է, որ քեռի եփրեմին պատմել է իր անցյալից որոշ բաներ, երկի քեռի Եփրեմը կարողացել է տալ անհրաժեշտ հարցերը, իզուր չէ, որ քննիչ էր, չէ՞ որ նրանք լավ հոգեբաններ են»:

Ահա հայկական մի տոհմաձառի պատմություն, որի արձանագրություն կտրտված, պղծված, բայց խրված են անցյալի մեջ, իսկ ճյուղերն ու սաղարթը հասել են Թուրքիա, Աբխազիա, Ռուսաստան, Լիտվա, Լիբանան, Սիրիա, Գորդանան, Նորվեգիա, ԱՄՆ...

Երբ թերթի այս համարն արդեն պատրաստ էր տպագրության, Ադրբեյջանի Յասմինը և դուստրը՝ Գրետան, ինձ ուղարկեցին մորը՝ Ջանակին, Սամվելի գրած մի քանի նամակները, որոնք շատ հուզիչ էին: Քանի որ վստահ էի, որ Սամվելն անպայման պահել է իրեն գրած մոր նամակները, ուստի դիմեցի Բեյրութում բնակվող նրա որդիներին՝ Իշխան և Արա Անդրանիկյաններին, խնդրելով հայրիկից մնացած թղթերի մեջ փնտրել այդ նամակները: Չաջորդ օրը Իշխանն ինձ տեղեկացրեց, որ թեև նամակները դեռ չեն հայտնաբերվել, բայց որոնումների ընթացքում անսպասելիորեն գտել են Անթիլիասի որբանոցում Սամվելի նկարները, նաև Բեյրութի «Յայ մարմնակրթական ընդհանուր միության» ֆուտբոլային ակումբի, որտեղ նա խաղում էր, լուսանկարները: Անշուշտ, Իշխանի հետ ես էլ ուրախացա, և խնդրեցի, որ շարունակեն փնտրել նրա նամակները, որոնց, հուսով եմք, կանդորադառնանք մեր թերթի առաջիկա համարներում: Ասեմ նաև, որ հրատարակության են պատրաստում Մեծ եղեռնի տարիներին համաշխարհային կրած տառապանքների մասին գիրք, որում կտպագրվեն նաև Ջանակ տատի ու նրա ժառանգների մասին «Չայն հանջենականի» հրատարակումները:



Արա Անդրանիկյան (Բեյրութ):



Գրետա Էքզարյան (Ադրբեյջան):

ավանի հայկական միջնակարգ դպրոց, որտեղ նրա դասընկեր՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Անդրանիկ Արուստյանը, Բեյրութից էր: Երևանի մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո տարբեր պատճառներով նա չէր կարողացել Բեյրութ վերադառնալ: Յետագայում, երբ արտասահման գնալ-գալը համեմատաբար հեշտացավ, նա 1980-ական թթ. սկզբին Բեյրութ է գնում և հանդիպում Սամվելին, որի հետ Աբխազիայում էր ծանոթացել, իսկ երբ նրա մայրն ու քույրը Աբխազիա հյուր եկան, ինչպես պատմում է Արևիկը, այցելեցին նաև Ջանակ տատիկին:

Շարունակենք տոհմաձառը. Յարուբի ավագ որդին՝ Սեդրակն իր կնոջ՝ Պայծառի, աղջկա՝ Սյուզաննայի և որդու՝ Յարուբի հետ ապրում է Գանթաղիում: Վարսենիկը ամուսնու՝ Մուսելիմյան Մեսրոպի, և տղաների՝ Տիգրանի և Արթուրի հետ ապրում է Աբխազիայի Լեսելիձե գյուղից 5-7 կմ հեռու գտնվող Սալմա գյուղում: Ջանակի դուստրը՝ Արևալույսը, որին կոչել էր ամուսնու առաջին կնոջ անունով, ունեցել է 3 երեխա՝ Ռիտա, Գևորգ, Պետրոս: Արևալույսը 77 տարեկան է և ապրում է Կրասնոդարի երկրամասի Մեծ Սոչիի Ադրբեյջանի Նիժնյայա Շիլով-

բնակվող Օրդուի զավառի Քիրեզ դերե գյուղացի մի կին, որի ամուսինը ստամբուլցի էր, Սամվելին տեղեկացնում է, որ նրա հորաքույրը՝ Արաքսին, որը եղել էր որբանոցում, ամուսնացել է և ապրում է Ստամբուլում: 1962-ին Սամվելը գնում է Ստամբուլ, գտնում հորաքրոջը: 1964թ. Բեյրութից Օդեսա երթուղարձի ճանապարհին «Լատվիա» նավը 1-ական օր պիտի կանգ առներ Ստամբուլում, և առիթից օգտվելով Սամվելն իր ընտանիքով հյուրընկալվում է հորաքրոջ՝ Արաքսի Ավետյանի (Ավետոշու) տանը: Յարուբյուն ուներ երկու տղա՝ Սամվել և Արամ, և մեկ աղջիկ՝ Գոհարիկ անուններով: 1967թ. Սամվելը կրկին այցելում է Ստամբուլ՝ Գոհարիկի հարսանիքին մասնակցելու: 1974թ. էլ Սամվելի ավագ դուստրը՝ Յասմինը է հյուրընկալվում նրանց մոտ: Յետագայում հորաքրոջ ընտանիքը տեղափոխվում է Ամերիկա, որտեղ Նյու Յորքում մահանում է Արաքսին: Երկի Սամվելից տեղեկանալով է 1960-ական թթ. վերջին Սահակը գնացել Թուրքիա, տեսակցել քրոջ հետ: Ցավոք, մեզ այլ մասնաճյուղից հայտնի չեն: Սահակը շուրջ 20 տարի առաջ մահացել է, նա ուներ 2 տղա և 2 աղջիկ, որոնցից այսօր ողջ է միայն

«Ձայն Գանձեմական» ամսաթերթի 2011թ. N3-4-րդ թիվին մեջ լոյս տեսած «43 տարի անց» եւ 2011թ. N5-6-րդ թիվին մեջ լոյս տեսած «եւս 47 տարի անց» յօդուածներուն հրատարակութենէն հազիւ 3-4 ամիս անցած, 2011-ի Սեպտեմբերին, Facebook-ի կայքէջի վրայ երեւցաւ Greta Ekzaryan անունով 19 տարեկան երիտասարդուհի մը, որ ինծի իբրեւ ընկեր («friend») հրաւեր դրկած էր: Նախ, նկատի չառի այդ. ըստ իմ սովորութեան, ընդհանրապէս նկատի չեմ առներ ինծի անծանօթ անձերը: Բայց շարք մը ետք նախազգացում մը ունեցայ, թէ այդ երիտասարդուհին կրնար սպասած հարազատներու մէկն ըլլալ: Ուստի, հրաւերը ընդունեցի եւ ատիկա հաստատեցի («confirm» ըրի) իրեն:

Իսկապէս, ներքին զգացողութիւնս ճիշդ դուրս ելաւ. պարզուեցաւ, որ այդ երիտասարդուհին՝ Կրեթան մեծ մօրս՝ Զանակ տատի զակին՝ Յարութ հօրեղբորս դուստր Յասմինին աղջիկն էր՝ Սոչի քաղաքէն: Ինծի մեծ ուրախութիւն պարգեւեց այս յայտնագործութիւնը: Սկսանք իրարու հետ զրուցել Skype-ով մինչեւ ուշ գիշեր եւ ընտանեկան նկարներ փոխանցել իրարու: Ան ըսաւ. «Uncle Ishkhan, դուն շատ հօրեղբորդիներ ու ազգականներ ունիս Աբխազիոյ մէջ. Յարութ հօրեղբայրդ ալ ողջ է: Ան 85 տարեկան է ու կ'ապրի Կանտիատի գիւղին մէջ: Լաւ կ'ըլլայ, որ օր մը այցելես իրեն»: Կրեթան զիս Սոչի հրաւիրեց՝ իրենց այցելելու, որպէսզի բոլոր հարազատներուն հետ տեսնուին ու մօտէն ծանօթանան իրենց: «Անշուշտ կը փափաքիմ», ըսի:

Ետքը, Facebook կայքէջին մէջ ծանօթացայ Սիւզաննա Ճանսրզեանին, որ նոյնպէս Յարութ հօրեղբորս որդիներէն

## ԻՆՉՊԷՍ ՎԵՐԱԳՏԱՅ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՍ



Իշխան Անդրանիկյանը և կինը՝ Կարինե Արախանյանը (Բեյրութ):

Սեդրակին աղջիկն էր: Ծանօթացայ 29 տարեկան Տիգրանին, որ Յարութ հօրեղբորս դստեր՝ Վարսենիկին որդին էր: Մեծ եղան ուրախութիւնս եւ յուզմունքս երբ խօսակցեցանք: Խօսեցայ նաեւ Վարսենիկին հետ: Ան ըսաւ. «Միշտ ձեր մասին կը խօսիմք եւ Լիբանանի մեր հարազատները կը յիշենք»:

Անկէ ետք, սկսայ ամէն օր, գիշերները Facebook-ի կայքին մէջ ըլլալ՝ հօրեղբորդիներուս հետ զրուցելու համար:

Ետքը ծանօթացայ Արեւիկին հետ: Ան զիս կը յիշէր մանկութեան օրերէն՝ 1964 թուականէն, երբ ծնողքիս հետ Աբխազիա այցելած էի: Խօսեցանք այդ օրերուն մա-

սին՝ յիշատակելի ուրիշ միւթերու հետ միասին:

Նոյն ատեն, լուսանկարչական քոյրս՝ Քնարիկ Անդրանիկեանը (ծանօթ է Kiki Cassia անունով), իր կարգին, ինքն ալ ինծի պէս Facebook-ի միջոցաւ ծանօթացաւ հարազատներուն:

Մեծ շնորհակալութիւն կը յայտնեն ճախ Աստուծոյս, ապա, մասնաւորապէս,



Արևիկի թոռը՝ Ժամնան (Սոչի):

